



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյո Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետյան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իտալական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

III

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

Լուսինե Ասղեոշ
ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՃՐՋԱՆՈՒՄ¹

Լեզվական քաղաքականությունը սահմանում է հաղորդակցային այս կամ այն նպատակի համար լեզվի, լեզվի գոյության ձևի, լեզվական միավորի ընտրությունը:

Լեզվական քաղաքականության ծրագրերը մշակվում են հասարակությունում լեզվական խնդիրների կարգավորման համար, իսկ տարածման ոլորտները ներառում են գիտությունը, կրթությունը, գրասենյակային աշխատանքը, զանգվածային հաղորդակցման միջոցները և:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել Հայաստանում լեզվական քաղաքականության մշակման խնդիրներին, լեզվական հարաբերությունները կարգավորող օրենքների կիրառությանը, վերջին տասնամյակում կրթական ոլորտում լեզվական քաղաքականությանը վերաբերող փոփոխվող քննարկումներին, և մասնավորապես հայերենի գերակա դերի պահպանության հնարավոր խոչընդոտներին:

Հոդվածի նպատակն է՝ ներկայացնել արդի շրջանում ՀՀ լեզվական քաղաքականությունը՝ որպես ընդհանուր պետական քաղաքականության մաս: Աշխատանքը կատարվել է փաստաթղթերի վերլուծության, փորձագիտական հարցազրույցի մեթոդների կիրառությամբ:

*Հիմնաբաներ*² լեզվական քաղաքականություն, լեզվական պլանավորում, մայրենի լեզու, օտար լեզու, ռուսալեզու դպրոցներ, ինքնություն:

Ներածություն

Լեզվի և հասարակության զարգացումը ոչ միայն չեն բացառում, այլև ենթադրում են լեզվի վրա գիտակցված ազդեցության հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

Ժամանակակից աշխարհում ավելի արդիական է դառնում լեզվի և հասարակության փոխազդեցության հարցը: Համաշխարհային հանրույթի սոցիալական կառուցվածքում տեղի են ունեցել փոփոխություններ, ակտիվացել են *միգրացիոն* գործընթացները, փոփոխվում է լեզվական *կոմպլեքսներությունը*, վերաբաշխվում են լեզվական միտումները և:

Լեզուների գործառնության վրա զգալի ազդեցություն ունի *գլոբալացման* գործընթացը, որը վերաբերում է ինչպես համաշխարհային լեզուներին, դրանց մրցակցությանը աշխարհի տարբեր երկրների հաղորդակցման ոլորտում, այնպես էլ գործառնության այլ մակարդակ ունեցող լեզուներին: Դա պայմանավորում է ժամանակակից լեզվական կյանքին վերաբերող գիտական

1 Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ֆինանսավորմամբ՝ «Երևան քաղաքի բնակչության լեզվական վարքագծի սոցիալ-մշակութային դրսևորումները» բազային թեմայի շրջանակում:

խնդիրների, լեզվական իրավիճակի զարգացման միտումների ուսումնասիրման արդիականությունը:

Գլոբալացման ազդեցության տակ ամրապնդվում են մարդկանց և սոցիալական համայնքների փոխադարձ կապերն ամբողջ աշխարհում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և լեզվական ոլորտներում: Զգալի փոփոխությունների է ենթարկվել նաև աշխարհի ժողովուրդների լեզուների գործառնությունը: Զգտելով աշխարհի տնտեսական միավորմանը՝ *գլոբալացումը* հանգեցնում է լեզվական միավորման միտման: Գլոբալացումն ընդլայնում է միջազգային հաղորդակցման սահմանները, այսինքն՝ այն լեզուներին, որոնք գործածվում են միջազգային հասարակական կազմակերպություններում (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, չինարեն, իսպաներեն, արաբերեն) ²:

Հենց այս համատեքստում կարևոր է հասկանալ, թե ինչ միտումներով է զարգանում ՀՀ լեզվական քաղաքականությունն արդի շրջանում, ինչպես է արձագանքում համաշխարհային փոփոխություններին, և որոնք են այս գործընթացի առավել խոցելի խնդիրները:

«Լեզվական քաղաքականություն» եզրույթը

«Լեզվական քաղաքականությունն» ընդգրկում հասկացություն է: Մասնագիտական գրականության մեջ լեզվաքաղաքականությունը նույնացնում են պետության գործնական քայլերին՝ ուղղված «պետական լեզվի կարգավիճակին, նրա գործառությանը, հանրային կյանքի առավել կարևոր ոլորտներում պետական լեզվի մենիշխան գործածության պաշտպանությանը, «տեղական» լեզուների գործածության կարգավորմանը»³:

Լեզվական քաղաքականությունը սահմանվում է նաև որպես միջոցառումների համալիր, որն ընդունվում է պետության, կուսակցությունների, դասի, հասարակական խմբավորման կողմից՝ լեզուների կամ լեզվական ենթահամակարգերի գործառությանը բաշխման պահպանման կամ փոփոխման նպատակով, իրականացվում է ընդհանուր քաղաքականության մաս կազմող և դրա նպատակներին տանող նոր կամ արդեն գոյություն ունեցող լեզվական նորմերի ստեղծման կամ պահպանման համար⁴:

Լեզվական քաղաքականությունը նախ և առաջ գործ ունի հաղորդակցային այս կամ այն նպատակի համար լեզվի, լեզվի գոյության ձևի, լեզվական միավորի ընտրության հետ: Լեզվական քաղաքականության ծրագրերը մշակվում են այս կամ այն հասարակությունում լեզվական խնդիրների կարգավորման համար⁵:

ՀՀ լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

Հոդվածի շրջանակում ներկայացնելու ենք ՀՀ լեզվական քաղաքականության հիմքը հանդիսացող «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Սահմանադրության,

2 Кириленко 2014.

3 Գյուրջիյան 2020, 4:

4 Биткеева, Михальченко 2015.

5 Швейцер, Никольский 1978, 120.

ինչպես նաև կրթության ոլորտում լեզվական հարաբերությունները կարգավորող «Հանրակրթության մասին» օրենքի գործնական կիրառության հնարավորությունները, ՀՀ լեզվական քաղաքականության արդի խնդիրները:

Խորհրդային Միության փլուզումից և անկախության հաստատումից հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ պետության նոր *ինստիտուցիոնալ* կառույցների ձևավորմանը և կայացմանը: Անկախության առաջին իսկ տարիներին շեշտը դրվեց լեզվի՝ որպես անկախ պետության սիմվոլի, ինքնության, ազգային մշակույթի պահպանման կարևոր գործոնի, վերաբերյալ քաղաքականության մշակման վրա: Արդյունքում անկախացումից շատ կարճ ժամանակ անց՝ 1993 թ. ընդունվեց «Լեզվի մասին» օրենքը, որում նշվում է հետևյալը. «Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները»: Օրենքի 1-ին հոդվածը՝ «Հայաստանի լեզվական քաղաքականություն», սահմանում է, որ ՀՀ պետական լեզուն հայերենն է, իսկ պաշտոնական լեզուն՝ գրական հայերենը: Օրենքով սահմանված կարգով ՀՀ-ն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը: Մինևոյն ժամանակ, ՀՀ-ն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը⁶:

Հարկ է նշել, որ «Լեզվի մասին» օրենքի ընդունումը հանրապետության ռուսախոս համայնքն ընկալեց ոչ-միանշանակ: Հայաստանում ռուսաց լեզուն գործածվում էր ոչ միայն ռուսների, այլև այլ ազգային փոքրամասնությունների շրջանում (ասորիներ, բելառուսներ, ուկրաինացիներ) ինչպես նաև Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների շրջանում: Օրենքի ընդունումը ենթադրում էր հայոց լեզվի պարտադիր իմացություն՝ սոցիալական վերընթաց շարժունության ապահովման համար: Հաշվի առնելով, որ հասարակության ռուսախոս հատվածը պատրաստ չէր լեզվական քաղաքականության կտրուկ փոփոխության, նկատվեց միգրացիայի մեծ հոսք: Այսպես, օրինակ, «Ռոսսիա» ՀԿ ղեկավար Յ. Յակովլենկոն նշում էր. «Արտագաղթի ամենամեծ հոսքը եղել է 1993 թ., երբ ընդունվեց լեզվի մասին օրենքը, և փակվեցին ռուսական դպրոցները, համալսարանների ռուսական բաժինները: ... Միանգամից ամբողջ կրթական համակարգը հայերենի փոխելը խոհեմ քայլ չէր: Այդ անցումը պետք է կատարվեր աստիճանաբար: ... Միգրացիան, իհարկե, կապված է եղել լեզվական այս գործընթացի հետ: Տարեսական գործոնը ևս ազդում էր, քանի որ լեզվի մասին օրենքից հետո շարքերը կորցրեցին իրենց աշխատանքը»⁷:

2011 թ. օրենքում կատարվել է լրացում, մասնավորապես նշվում է. «Պետական լեզվաքաղաքականությունը լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված պետական լեզվի շահե-

6 ՀՀ օրենքը Լեզվի մասին, 1993, օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից, 30 մարտի 1993թ. Հ.Ն-0773-Լ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418>, դիտումը՝ 05.09.2023:

7 Գալստյան 2015, 46-47:

րի պաշտպանությունը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը»:

«Պետական լեզվաքաղաքականության իրականացումը» հոդվածը սահմանում է ՀՀ պետական լեզվաքաղաքականությունն իրականացնող մարմինները: Այսպես, ըստ օրենքի՝ ՀՀ պետական լեզվաքաղաքականությունն իրականացնում են ՀՀ կառավարությունը, պետական կառավարման և տեղական ինքնա-կառավարման մարմինները, ինչպես նաև դրա համար լիազորված պետական մարմինը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան⁸:

Միևնույն ժամանակ, հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ներկայումս բացակայում է ամբողջությամբ մշակված լեզվական քաղաքականություն: Լեզվական քաղաքականության մշակման հարցերով զբաղվող փորձագետը նշում է. «2018 թ. մշակվել է ՀՀ լեզվական պետական քաղաքականության նախագիծը, բայց 2020 թ. համավարակը, 44-օրյա պարերազմը և ներկայիս իրավիճակը լուրջ խոչընդոտներ էին գործնական քայլեր իրականացնելու համար»⁹:

Արդի շրջանում ՀՀ լեզվական քաղաքականությունն ու լեզվական հարաբերությունները կարգավորվում են նաև Սահմանադրությամբ: Այսպես, Սահմանադրության 20-րդ հոդվածով սահմանված է. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»: Սահմանադրության 19-րդ հոդվածով էլ կարգավորվում են հայկական կապերը սփյուռքի հետ: Մասնավորապես. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պարմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»¹⁰:

Թեև օրենսդրական առումով սահմանված է հայոց լեզվի կարգավիճակը, այնուամենայնիվ գործնականում լեզվական քաղաքականությունն իրականացնելիս որոշ խնդիրներ են ծագում: Այս առումով լեզվական քաղաքականության մշակմամբ զբաղվող փորձագետը նշում է. «Լեզվական քաղաքականության մշակման և իրականացման հարցում բազմաթիվ խնդիրներ ունենք: Օրենսդրական բազմաթիվ բացեր կան: Ներուժի խնդիր ունենք, մասնագետը չկա: Չունենք լեզվի սոցիոլոգներ, լեզվի քարոզիչներ, լեզվի փոխադասություն գոյություն չունի: Չկա էմպիրիկ նյութ, որի վրա կարող ենք հենվել, լեզվական ուսումնասիրություն չկա»:

Լեզվական քաղաքականության հենարանը պետք է լինի գիտությունը: Լեզվաքաղաքականության արդյունավետ իրականացման համար պետք են իրավական նախադրյալներ, գիտնականների սերունդ»¹¹:

Օրենքով սահմանված կարգով Լեզվի կոմիտեն մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ ՀՀ իրավական ակտերի նախագծերը (հոդվածն ավելացել է 2018 թ.):

8 ՀՀ օրենքը Լեզվի մասին, 1993:

9 Հարցազրույց՝ Երևան, 2023 թ., սեպտեմբեր:

10 ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>, 07.08.2023:

11 Հարցազրույց՝ Երևան, 2023 թ., սեպտեմբեր:

Միևնույն ժամանակ, Լեզվի կոմիտեն պետք է իրականացնի քարոզչություն, լեզվական փորձաքննություն, լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կանխարգելիչ միջոցառումներ, գնահատումներ, ինչպես նաև կազմակերպի լեզվաքաղաքականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ¹²:

Այսուհանդերձ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նկատելի են «Լեզվի մասին» և «Գովազդի մասին»¹³ օրենքների խախտումներ, մասնավորապես՝ կապված գրական հայերենի կիրառության կամ օտարալեզու վահանակների հայերեն համարժեքների ներկայացման հետ: Այսինքն՝ գործնականում լեզվական քաղաքականության իրականացման ակնհայտ խնդիրներ կան, քանի որ պատասխանատու մարմինը, բացի վերահսկողությունից, չունի պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ գործիքակազմը:

Լեզվական քաղաքականությունը կրթության ոլորտում

Պետական լեզվի և պետության այլ լեզուների վերաբերյալ քաղաքականությունն ուղղված է երկրի ներսում հաղորդակցման հնարավորությունների ստեղծմանը և լեզվական բազմազանության պահպանմանը: Օտար լեզուներին վերաբերող քաղաքականությունը հստակեցնում է, թե ո՞ր լեզուները պետք է ուսումնասիրվեն, և ո՞րն է նախընտրելի հաջորդականությունը: Ուսումնասիրվող օտար լեզուների ցանկից է կախված քաղաքացիների ակադեմիական շարժունությունը:

Կրթական լեզվական քաղաքականությունը պետության ընդհանուր լեզվական քաղաքականության անբաժան մասն է և պետք է դիտարկվի ոչ միայն որպես կրթական քաղաքականության մաս կամ կրթության բաղադրիչ, այլև որպես պետության նպատակաուղղված գործունեություն՝ միջազգային կարգավիճակի կարգավորմանը երկարաժամկետ հեռանկարում¹⁴:

ՀՀ «Լեզվի մասին» օրենքով սահմանված է. «Հայաստանի Հանրապետության տարածքում գրնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է»¹⁵: Հանրակրթության մասին ՀՀ օրենքում ևս հղում է կատարվում վերը նշված հոդվածին. «Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»¹⁶:

Այսուհանդերձ, չնայած կրթության լեզվին վերաբերող օրենսդրական հստակ կարգավորումներին, պարբերաբար լայն քննարկումներ են ծավալվում

12 ՀՀ օրենքը Լեզվի մասին, 1993:

13 ՀՀ օրենքը Գովազդի մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75427>, 10.02.2024:

14 Лалетина 2013, 158.

15 ՀՀ օրենքը Լեզվի մասին, 1993:

16 ՀՀ օրենքը Հանրակրթության մասին, ընդունված է 2009 թ. հուլիսի 10-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71908>, դիտումը՝ 04.09.2023:

օտարալեզու դպրոցների բացման կամ վերաբացման շուրջ: Մասնավորապես հաճախ են քննարկվում ռուսական դպրոցների բացման հետ կապված նախագծերն ու առաջարկները:

Անցյալում ունենալով Խորհրդային Միության տարիներին ռուսականացման քաղաքականության փորձը, որը մեծապես նկատելի էր կրթական ոլորտում՝ մեծ թվով ռուսական դպրոցների բացման, ռուսերենի կարգավիճակի բարձրացման ձևով, հանրության լայն շրջանակներին մտահոգում են ռուսական դպրոցների բացման վերաբերյալ խոսակցությունները:

Ռուսաց լեզվի որոշակի դերի պահպանման համար երկրում դեռևս կան որոշ նախադրյալներ:

Մասնագետների գնահատմամբ՝ Հայաստանի բնակչության շուրջ 70%-ն այս կամ այն չափով գիտի ռուսերեն: Ռուսաց լեզվի հիմնական կրողները Ռուսաստանում կամ նախկին ԽՍՀՄ տարածքում ծնված հայերն են, Հայաստանում ռուսական կրթություն ստացածները, ինչպես նաև 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին Ադրբեյջանից, Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաև Աբխազիայից և Հյուսիսային Կովկասից Հայաստան տեղափոխված փախստականները¹⁷: Բնակչության այս հատվածի ներկայացուցիչներից շատերի համար ռուսաց լեզուն շարունակում է մնալ տեղեկատվության ստացման համար նախընտրելի լեզու:

Բացի այդ, Հայաստանը, տնտեսական, ռազմական ոլորտներում համագործակցելով ՌԴ հետ, հաճախ ռուսերենը կիրառում է որպես աշխատանքային լեզու:

Այսպիսով, վերջին տասնամյակներում, կախված քաղաքական այս կամ իրադրությունից, մշտապես փոփոխություններ են նկատվում նաև Հայաստանի լեզվական քաղաքականության ոլորտում, որոնք երբեմն ոչ-լիարժեք են համապատասխանում գործող օրենսդրության պահանջներին: Այսպիսի փոփոխությունների շարքին կարող ենք դասել ռուսական դպրոցների վերաբացմանը վերաբերող ծրագրերը, հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացման և ժամաքանակի ավելացման վերաբերյալ հայեցակարգերը:

Ներկայացնենք վերջին տասնամյակում հանրակրթության ոլորտում լեզվական քաղաքականության խնդիրները, հայոց լեզու - ռուսաց լեզու դերերի բաշխումն ու օրենսդրությանը համապատասխան՝ հայոց լեզվի գերակայության պահպանմանն ուղղված քննարկումները, հանրության արձագանքն ու պատասխանատու մարմինների մոտեցումն այս քննարկումների վերաբերյալ:

Դեռևս 2010 թ. Հայաստանում քննարկումներ եղան օտարալեզու դպրոցների վերաբացման շուրջ: Ծավալվեց քաղաքացիական շարժում՝ ընդդեմ օտարալեզու դպրոցների վերաբացման: «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» շարժման մասնակիցները կազմակերպում էին ցույցեր՝ «Ամոթ», «Հայաստանում հայերեն», «Ոչ մի զիջում լեզվի հարցում», «Լեզուն սուրբ է, ուրացողը՝ դավաճան», «Զիջողները ստրուկ են», «Կրթությունը՝ հայերեն», «Գաղութացմանը՝ ոչ» և այլ վանկարկումներով¹⁸:

17 Манукян, Тасиц 2018, 123-124.

18 Ավագյան Ս., Հայաստանում օտարալեզու դպրոցներ չեն բացվելու, 2010, <http://hetq.am/arm/news/45618/hayastanum-otaralezu-dprocner-chen-bacvelu.html>, դիտվել է՝ 20.08.2023:

Շարժման մասնակիցները նշում էին, որ դեմ են, որ հայերենը վերածվի բանվորների լեզվի, իսկ օտար լեզուն՝ գիտության, արվեստի, մտավորականների լեզվի: Նրանք ներկայացնում էին, որ պայքար են ծավալում մայրենի լեզվի և ազգային ինքնությունը պահպանելու համար: Հայաստանում օտարալեզու դպրոցների բացման դեմ որպես փաստարկներն էին բերվում ապագայում հասարակության շերտավորումը, ազգային անվտանգության թուլացումը¹⁹:

Ըստ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» քաղաքացիական նախաձեռնության՝ օտարալեզու դպրոցները, բացի խտրականություն սերմանելուց, օժանդակում են հայերենի՝ երկրորդական լեզվի վերածվելուն²⁰:

Այսպիսով, ակնհայտ է, որ շարժման մասնակիցներն օտար լեզուների դերի բարձրացումն ուղղակիորեն կապում են ինքնության կորստի, ինչպես նաև պետականության պահպանման վտանգի հետ:

Այն մասին, որ կրթության ոլորտը մշտապես եղել է քաղաքական իրավիճակի փոփոխությունների առաջին կրողներից մեկը, վկայում է նաև այն փաստը, որ անկախացումից հետո խորհրդային տարիներին ռուս հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների անունները կրող դպրոցներն անվանափոխվեցին: Օրինակ՝ Ն. Կրուպսկայայի անվան դպրոցը 1991 թ. վերանվանվեց՝ Ն. Աղբալյանի անվան, Ֆ. Ջերժինսկու անվան դպրոցը՝ Ջ. Կիրակոսյանի անվան (1999 թ.):

Իսկ ինչ դեր ունեն օտար լեզուներն այսօրվա հանրակրթական դպրոցներում: Դիտարկենք պաշտոնական փաստաթղթերի, լեզվաքաղաքականությունը մշակող պատասխանատուների դիրքորոշումների վերլուծությունը:

Չնայած այն հանգամանքին, որ հայաստանյան դպրոցներում դասավանդվում են տարբեր օտար լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, ադրբեջաներեն ևն, այնուամենայնիվ հանրակրթության ոլորտում լեզվական քաղաքականության առավել արտահայտված քննարկումները պտտվում են ռուսաց լեզվի դերի շուրջ:

Անդրադառնալով Հայաստանի կրթական համակարգում ռուսաց լեզվի դերի պահպանման նախադրյալներին: Ռուսաց լեզվի դասավանդումը պարտադիր է ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում: Ռուսաց լեզվի դերն ամրագրված է ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված Բարեկամության, համագործակցության, փոխադարձ օգնության մասին պայմանագրով: Պայմանագրի 16-րդ հոդվածում նշվում է, որ հայկական կողմը պարտավորվում է ՀՀ կրթական համակարգում ապահովել պայմաններ՝ ռուսաց լեզվի խորացված ուսուցման համար²¹: Ռուսաց լեզվի ուսուցման մակարդակի բարձրացմանը նպաստել է 1999 թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ Կառավար-

19 Ամիրջանյան Մ., Օտարալեզու դպրոցների բացումը Հայաստանում. մեկ հարց լուծված է, տաքը՝ ոչ, 2010, <http://www.panarmenian.net/arm/society/details/49970/>, դիտվել է՝ 20.08.2023:

20 Դիմում Հայաստանում օտարալեզու դպրոցներ հիմնող կառավարություններին և կազմակերպություններին, 2014, <http://www.lragir.am/index/arm/0/country/view/100752>, դիտվել է՝ 20.08.2023:

21 Պայմանագրի ՀՀ և ՌԴ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, 1997, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532>, դիտվել է՝ 06.02.2024:

րության կողմից «Ռուսաց լեզուն Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում և մշակութային-հասարակական կյանքում» հայեցակարգի ընդունումը²²:

Հարկ է նշել, 2002 թ. հունվարի 22-ին Հայաստանը վավերացրել է Տարածաշրջանային լեզուների եվրոպական խարտիան, համաձայն որի՝ ռուսաց լեզուն Հայաստանում ճանաչվում է ազգային փոքրամասնության լեզու, ինչը ևս մեկ անգամ վերահաստատում է հայոց լեզվի պաշտոնական գերակայությունը:

2017 թ. սեպտեմբերին հանրային քննարկման ներկայացվեց ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման հայեցակարգը, որում մասնավորապես նշվում էր. «*Ռուսաց լեզվի տիրապետումը հանդիսանում է քաղաքացու մրցակցային առավելությունը բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևավորելիս*»: Հայեցակարգի առաջարկների թվում նշվում էին.

- ռուսաց լեզվի ուսուցում այս կամ այն առարկայական ոլորտում (ֆիզիկա, մաթեմատիկա, աշխարհագրություն ևն), այսինքն՝ ավագ դպրոցում մի շարք առարկաներից որոշ թեմաների՝ հայերենին զուգահեռ դասավանդում.
- ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ դպրոցների և դասարանների (ինչպես նաև ռուսերենով ուսուցմամբ դասարանների) թվի ավելացման նպատակահարմարության որոշման համար մշտադիտարկման անցկացում²³:

Այսպիսի հայեցակարգի առաջարկումը հանրային քննադատական արձագանքի արժանացավ: Այս առիթով ԶԼՄ-ների հետ հարցազրույցում ՀՀ Կրթության և գիտության նախկին նախարար Լ. Մկրտչյանը նշեց, որ դեռևս խորհրդային ժամանակներից ռուսերենը Հայաստանում տարածված է եղել, սակայն երբեք չի ունեցել կարգավիճակ: Նրա խոսքով՝ «*Հայաստանի միակ պետական լեզուն կա և կմնա հայերենը, քանի որ մենք անկախ, ինքնիշխան պետություն ենք: Դա աքսիոմատիկ ճշմարտություն է: Մասցած բոլոր լեզուներն օտար լեզուներ են*»²⁴:

2021 թ. ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը հայտարարեց, որ ՌԴ-ն ակտիվ գործողություններ է ձեռնարկում «ամբողջ աշխարհում ռուսաց լեզվի և ռուսական մշակույթի դիրքերի ամրապնդման ուղղությամբ»՝ ներկայացնելով Հայաստանի հետաքրքրվածությունն այդ ծրագրի մաս կազմելու: Իսկ արդեն 2022 թ. սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխվեցին բազմաթիվ ռուսներ, ուկրաինացիներ, ռուսախոս հայեր: Այս իրավիճակով պայմանավորված՝ կրկին քննարկման կիզակետում հայտնվեց

22 Ռուսաց լեզուն ՀՀ կրթության համակարգում և մշակութային-հասարակական կյանքում, 1999, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=8359>, 06.02.2024:

23 ՀՀ կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման հայեցակարգ, նախագիծ, <https://www.e-draft.am/projects/415/about>, դիտվել է՝ 20.08.2023:

24 Հայաստանում ռուսերենը օտար լեզվի կարգավիճակ է ստացել, բայց և ռուսաց լեզվի ուսուցման հայեցակարգ է մշակվել. Լևոն Մկրտչյանը՝ TACC-ին, 2017, <https://factor.am/18105.html>, դիտվել է՝ 20.08.2023:

կրթության ոլորտում ռուսաց լեզվի դերի բարձրացման, ռուսական դպրոցների բացման հարցը: Այս քննարկման ծավալմանը մեծապես նպաստեց ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի այն հայտարարությունը, որ, հաշվի առնելով հայկական կողմի ցանկությունը, ՌԴ-ն աշխատում է ՀՀ-ում ռուսական դպրոցների թվի ավելացման վրա²⁵:

ՀՀ-ում լեզվական քաղաքականություն մշակող պաշտոնական մարմիններն այս քննարկման վերաբերյալ հղում են կատարում «Լեզվի մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներին:

Այսպես, օրինակ, ԿԳՄՍ նախկին նախարար Վ. Դումանյանը 2021 թ. ռուսական դպրոցների բացման վերաբերյալ նշում էր, որ օրակարգում նման թեմա չկա. *«Ո՛չ Հայաստանում են ռուսական դպրոց բացելու, ո՛չ Ռուսաստանում են հայկական դպրոց բացելու»*: Միևնույն ժամանակ, վերջինս նշում էր, որ աշխատանքներ են տարվում ռուսաց լեզվի և այլ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման նպատակով. *«Որքան շատ լեզու իմանանք, այնքան մենք ավելի ճկուն կլինենք, ավելի ինֆորմացված կլինենք, ավելի ազատ կլինենք: Ի վերջո, մենք կադապարված չենք մեր սահմաններով, մենք 21-րդ դարում շփումների կարիք ունենք և անհրաժեշտություն: Լեզու իմանալը մեզ միայն ավելի հնարավորություններ է տալու, հատկապես, որ ռազմավարական գործընկեր ենք Ռուսաստանի հետ»*²⁶:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ ներկա նախարար Ժ. Անդրեասյանի՝ Հայաստանում ռուսական նոր դպրոցներ բացելու հետ կապված քննարկումները վարվում են ՀՀ օրենսդրության շրջանակում: Մասնավորապես՝ ՌԴ և օտարերկրյա այլ քաղաքացիների պարագայում կարող է ուսուցումը լինել այլ լեզվով:

Հայաստանում կրթության լեզուն հայերենն է, 2-րդ դասարանից պարտադիր դասավանդվում է ռուսերեն, 3-րդ դասարանից՝ անգլերեն կամ որևէ այլ օտար լեզու: Հայաստանի 63 դպրոց ռուսերենով խորացված ուսուցում ունի, 45-ը՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ:

Ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 9-րդ հոդվածի՝ հանրապետությունում օտար լեզվով կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների առավելագույն թիվը 11-ն է: Նույն օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առավելագույն թիվը չորսն է:

Այսպես, Հայաստանում այսօր գործում է ռուսերենով ուսուցում իրականացնող 3 դպրոց: Երևանում ՌԴ ՊՆ թիվ 21 հիմնական դպրոցում ընդունելությունն իրականացվում է միայն ՌԴ զինծառայողների և դիվանագետների երեխաների համար: Իսկ Գյումրու թիվ 19 ռուսական դպրոցում սովորում են ՌԴ զինծառայողների երեխաները, սակայն այդտեղ կրթություն ստանալու հնարավորություն ունի ՌԴ ցանկացած քաղաքացու երեխա: Երրորդն Արտաշատի սահմանապահ զորամասի դպրոցն է:

ՀՀ լեզվական քաղաքականության մշակմամբ զբաղվող փորձագետը

25 Գրիգորյան Ն. Հայաստանում ռուսական դպրոցների թիվը կավելանա, 2022, <https://www.aravot.am/2022/06/09/1273228/>, դիտվել է՝ 20.08.2023:

26 Սահակյան Ն., ԿԳՄՍ նախարարը հերքում է, թե քննարկում են Հայաստանում ռուսական դպրոցներ բացելու հարցը, 2021, <https://www.azatutyun.am/a/31522894.html>, դիտվել է՝ 10.11.2021:

վերոնշյալ խնդրի վերաբերյալ նշում է. «Առհասարակ, ինչո՞ւ ենք առանձնացնում միայն ոռոսերենը: Բոլոր լեզուների դեպքում մոտեցումը նույնն է: Կա «Լեզվի մասին» օրենքը, որտեղ հստակ սահմանված է կրթության լեզուն, նշված է, թե որ դեպքերում է նախատեսված այլ լեզուներով կրթությունը՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Ընդհանուր առմամբ, մենք կարծում ենք, որ պետք է ապահովել բոլոր լեզուների ներկայությունը գիտակրթական համակարգում»²⁷:

Օտար լեզուների ուսուցման հնարավորությունները Հայաստանում

Ինչ վերաբերում է այլ օտար լեզուների ուսուցմանը և տարածմանը, կարող ենք փաստել, որ Հայաստանում դրա համար ստեղծվում են տարբեր պայմաններ և հնարավորություններ: Այսպես, օրինակ, Հայաստանն անդամակցում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը (ՖՄԿ) 2004-ից և 2012-ից արդեն ՖՄԿ լիիրավ անդամ է: Այս համատեքստում 2012 թ. հոկտեմբերի 12-ին Հայաստանը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ կնքել է լեզվական պակտ, որը պայմանագրային փաստաթուղթ է՝ կնքված ՖՄԿ-ի և նրա լիիրավ կամ ասոցացված անդամ այն երկրների միջև, որտեղ ֆրանսերենը պաշտոնական լեզու չէ²⁸:

2016 թ. սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 3-ը Հայաստանում անցկացվել է «Գերմաներենի օրեր» նախագիծը, 2017-ին՝ «Գերմաներենի շաբաթը», որի շրջանակում կազմակերպվել են ցուցադրություններ, ընթերցանության օրեր, համերգներ և այլ միջոցառումներ²⁹: Սակայն այս գաղափարը շարունակական չեղավ:

Վերջին տարիներին նկատելի է նաև չինարենի դերի բարձրացումը Հայաստանում: 2022 թ. տվյալներով Հայաստանում չինարեն է ուսումնասիրում շուրջ 3000 մարդ: Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում գործում է Կոնֆուցիոսի ինստիտուտը, իսկ ԵՊՀ-ում 2015-ից գործում է «Չինարենի և չինական մշակույթի կենտրոնը»: Հայաստանի 4 բուհերում և շուրջ 10 դպրոցներում և հայ-չինական բարեկամության դպրոցում կարելի է ուսումնասիրել չինարեն: Կրթությունը կազմակերպվում օգնում է նաև Հայաստանում Չինաստանի դեսպանատունը³⁰: Այսպիսով, Հայաստանում չինարենի դերի բարձրացումը պայմանավորված է նաև ժամանակակից աշխարհաքաղաքական իրադարձություններով, Հայաստանի արտաքին քաղաքական կապերի ընդլայնման փորձով, իսկ պետության դիրքորոշումը դրա վերաբերյալ հայ-չինական դպրոցի բացման արարողության ընթացքում արտահայտել է

27 Անգելուշ Լ., Երևան, 2023 թ., սեպտեմբեր:

28 Հայաստանը և Ֆրանկոֆոնիան, <https://am.ambafrance.org/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D6%87-%D5%96%D6%80%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B8%D6%86%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A1%D5%B6, 10.02.2024>:

29 Հայաստանում մեկնարկում է գերմաներենի շաբաթը, <https://armenpress.am/arm/news/906823/>, 12.03.2024:

30 Հարությունյան Ա., «Չինարենը բարդ չէ, չինարենը բարդ չէ. լեզուն սովորողների թիվը Հայաստանում շեշտակի ավելացել է». <https://hy.armradio.am/archives/426545>, 12.03.2024:

Հանրապետության վարչապետն իր ելույթում՝ նշելով, որ «*չինարենի ներկայությունը Հայաստանում ոչ միայն քաղաքակրթական, այլև տնտեսական անհրաժեշտություն է*»³¹:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում սկսեց տարածվել ադրբեջաներենի ուսուցման անհրաժեշտության մասին քննարկումը՝ անվտանգության ապահովման համար տեղեկատվության ընդարձակման տեսանկյունից:

Պատերազմական տարբեր իրավիճակներ, այդ թվում՝ ակնատեսների պատմությունները, թույլ են տալիս ենթադրել, որ ադրբեջանցի զինվորները շատ հաճախ են կիրառել հայերենը, որն ունեցել է էական նշանակություն ու երբեմն՝ անշրջելի հետևանքներ: Ադրբեջանցիների կողմից հայերենի իմացությունը նաև թույլ է տալիս ավելի հետևողականորեն տարածել անհանդուրժողականություն հայերի նկատմամբ: Այս տեսանկյունից Հայաստանն ադրբեջաներենի ուսուցանումը սկսեց դիտարկել իր կրթական առաջնահերթությունների ցանկում: Այսպես, օրինակ, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում սկսեց գործել «Ադրբեջանագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիրը³²: Մյուս կողմից՝ կրթության փորձագետ Ատոմ Մխիթարյանը տարածաշրջանային լեզուների ուսումնասիրումը կարևորել է նաև խաղաղության հաստատման քաղաքականության տեսանկյունից³³:

2022 թ. ընդունվել է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքը, որի «Ծրագրի հիմնական ռազմավարական ուղղությունները» բաժնում առանձնացված է կրթական համակարգում տարածաշրջանային երկրների լեզուների (պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, ադրբեջաներեն) դասավանդման ներդրումը³⁴:

2022-2023 թթ. ուսումնական տարվանից Հայաստանում իրականացվում է տարածաշրջանային լեզուների ուսուցումը՝ որպես երրորդ օտար լեզու կամ առարկայական խմբակ՝ կամընտրական սկզբունքով: Որոշման համաձայն՝ ադրբեջաներենի և թուրքերենի ուսուցումը կազմակերպվում է բացառապես 10-12-րդ դասարանների սովորողների համար, իսկ վրացերենի և պարսկերենի ուսուցումը՝ միջին դպրոցի դասարաններից սկսած: Վերոնշյալ ժամանակահատվածում տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը կյանքի է կոչվել է ՀՀ 33 հանրակրթական ուսումնական հաստատություններում, որոնցից 13-ում՝ պարսկերեն, 3-ում՝ վրացերեն, 13-ում՝ թուրքերեն, 4-ում՝ ադրբեջաներեն: Համապատասխան մասնագետ ունենալու դեպքում ուսումնական հաս-

31 «Չինարենը ՀՀ-ում ոչ միայն քաղաքակրթական, այլև տնտեսական անհրաժեշտություն է. Փաշինյան». <https://armtimes.com/hy/article/142775>, 12.03.2024:

32 Հովհաննիսյան Է., «Ադրբեջաներենը՝ զենք. ԵՊՀ-ում կներդրվի ադրբեջանագիտության մագիստրոսական ծրագիր», <https://hy.armradio.am/archives/375649>, 12.03.2024:

33 «Թուրքերենն ու ադրբեջաներենը Հայաստանում. թշնամու լեզուն պետք է իմանալ». <https://www.lratvakan.am/details/52458/am/>, 12.03.2024:

34 ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին, <https://www.irtek.am/views/act.aspx-?aid=156043>, 12.03.2024:

տատություններն ազատ են տարածաշրջանային լեզուների ուսուցումը ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված ծրագրերով կազմակերպելու հարցում, որի մեկնարկի մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ԿԳՄՍ նախարարությանը³⁵:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ տարածաշրջանային լեզուներից հատկապես թուրքերենի և ադրբեջաներենի ուսումնասիրման վերաբերյալ հասարակական լայն շրջանակում քննարկումները տարվում են երկու ուղղությամբ: Մի կողմից շատերը համարում են, որ որոշումն ուշացած է, և Հայաստանում նշված լեզուներին տիրապետելը շատ ավելի վաղուց է ունեցել ռազմավարական նշանակություն, մյուս կողմից՝ թուրքերենի և ադրբեջաներենի մուտքը հայաստանյան կրթական համակարգ քննադատվում է՝ ազգային ինքնությունը, ազգային մտածողությունը վտանգելու համար:

Եզրահանգումներ

Այսպիսով, ՀՀ լեզվական հարաբերությունները կարգավորող «Լեզվի մասին» ՀՀ օրենքը և Սահմանադրությունը հստակ սահմանում են հայոց լեզվի գերակայությունը ՀՀ տարածքում: Այնուամենայնիվ, լեզվական քաղաքականության ոլորտը կարգավորող մասնագետները նշում են, որ գործնականում խնդիրներ են առաջանում օրենքների դրույթների լիարժեք կիրառության և հայոց լեզվի կարգավիճակի պահպանման հարցում, ինչը լեզվական քաղաքականության թերի մշակման արդյունք է:

Միևնույն ժամանակ, լինելով ազգային քաղաքականության մաս՝ լեզվական քաղաքականությունը կախված է ընդհանուր պետական քաղաքականության սկզբունքներից: Վերջին տասնամյակում արտաքին քաղաքականության սկզբունքների փոփոխություններն իրենց արտացոլումն են ստանում լեզվական քաղաքականության միտումներում: Անկախացումից հետո և հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը, փորձելով ընդարձակել արտաքին քաղաքական կապերը, հնարավորություն է ստեղծում երկրում օտար լեզուների ակտիվ կենսագործունեության համար: Այս փոփոխություններն առավելապես արտահայտվում են կրթական համակարգում, և միշտ չէ, որ միանշանակ են ընդունվում հասարակության կողմից: Այսպես, մտահոգությունները մասնավորապես կապված են լինում հայոց լեզու - ռուսաց լեզու դերերի հարաբերակցության փոփոխության, կրթական համակարգում տարածաշրջանային լեզուների ներգրավմամբ ազգային ինքնության վտանգման հետ: Այնուամենայնիվ, կրթության ոլորտի պատասխանատուները պաշտոնական բոլոր ելույթներում նշում են, որ յուրաքանչյուր փոփոխություն կատարվում է օրենքի շրջանակում:

35 Դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը կշարունակվի նաև այս ուսումնական տարում՝ կամավորության սկզբունքով, <https://escs.am/am/news/18025>, 12.03.20024:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ 2015

Գալստյան Մ.Վ., Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (Էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Երևան, «Գիտություն», 2015, 208 էջ:

БИТКЕЕВА, МИХАЛЬЧЕНКО 2015

Биткеева А. Михальченко В., Предисловие // Языковая политика в контексте современных языковых процессов (отв. ред. Биткеева А.), Москва, «Азбуковник», 2015, 5-7.

КИРИЛЕНКО 2014

Кириленко С., Развитие языков в условиях глобализации // Языковая политика и языковые конфликты в современном мире: международная конференция (г. Москва, 16-19 сентября 2014 г.): доклады и сообщения / отв. ред. А. Н. Биткеева, В. Ю. Михальченко. Москва, ИЯ РАН, 2014, 365-366.

ЛАЛЕТИНА 2013

Лалетина А., Глобализация и языковая политика в сфере образования // Политическая лингвистика, Вып. 1 (43) (главный редактор А. П. Чудинов), ФГБОУ ВПО «Уральский государственный педагогический университет», Екатеринбург, 2013, 158-163.

МАНУКЯН О., ТАСИЦ К. 2018

Манукян О., Тасиц К., Положение русского языка в Армении // Новая Евразия. Проблемы национальной стратегии, 2018, № 5 (50), 123-140.

ШВЕЙЦЕР, НИКОЛЬСКИЙ 1978

Швейцер А.Д., Никольский Л.Б., Введение в социоллингвистику (Для институтов и факультетов иностранных языков), Москва, Высшая школа, 1978, 216 с.

Համացանցային հղումներ

ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ 2020

Գյուրջինյան Դ.Ս., «Լեզվաքաղաքականություն» եզրույթի ընդհանուր բնութագիրը, Լեզվաբանական տերմինաբանության հարցեր // Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, 49-58. <https://www.langcom.am/wp-content/uploads/2020/05/«Լեզվաքաղաքականություն»-եզրույթի-ընդհանուր-բնութագիրը.pdf>, դիտումը՝ 20.08.2023:

Lusine M. Angelush

Institute of Archaeology and Ethnography

LANGUAGE POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN MODERN CONDITIONS

Keywords: language policy, language planning, mother tongue, foreign language, identity.

The development of language and society not only excludes but also implies the possibility and necessity of conscious influence on language. The article's goal is to present the language policy that the Republic of Armenia currently uses as part of its overall state policy. The presentation of the following problems was highlighted during the research:

- The laws regulating the language policy of the Republic of Armenia, their actual applicability,

- The ratio of the use of the state language and foreign languages in the period of globalization,
- The problems of language policy in the field of education, changes in the last decade.

The relevance of the study of trends in the development of the language situation is due to the changes taking place in the social structure of the world community: active migration processes, access to information, and mutual relations of social communities in the economic, political, and cultural spheres.

In this context, it is more important to understand the flexibility of the laws governing language relations, the opportunities created for the development of knowledge of foreign languages, and the problems and issues of preserving the native language. The theoretical basis of the work is the presentation of the term "language policy".

The methods of document analysis and expert interviews were used for research. There was a content analysis of laws regulating language policy that summarized the difficulties of applying these laws in the modern period. Expert interviews were conducted with representatives of the structures that regulate the language policy in Armenia, based on which modern tendencies, principles, and problems of the development of the language policy of the Republic of Armenia were presented.

Лусине Микаэловна Ангелуш

Институт археологии и этнографии

ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

Ключевые слова: языковая политика, языковое планирование, родной язык, иностранный язык, идентичность.

Развитие языка и общества не только не исключает, но и предполагает возможность и необходимость сознательного воздействия на язык.

Цель статьи – представить языковую политику, реализуемую в настоящее время Республикой Армения в рамках общей государственной политики. В ходе исследования были выделены следующие проблемы:

- Законы, регулирующие языковую политику Республики Армения, их фактическое применение,
- соотношение использования государственного языка и иностранных языков в период глобализации,
- проблемы языковой политики в сфере образования, изменения в последнем десятилетии.

Актуальность исследования тенденций развития языковой ситуации обусловлена изменениями, происходящими в социальной структуре мирового сообщества: активными миграционными процессами, доступом к информации, взаимными связями социальных общностей в экономической, политической, и культурной сфере.

В этом контексте важнее понять гибкость законов, регулирующих языковые отношения, возможности, создаваемые для развития знания иностранных

языков, проблемы и вопросы сохранения родного языка. Теоретической основой работы является представление термина “языковая политика”.

Для исследования были использованы методы анализа документов и экспертного интервью. Был проведен контент-анализ законов, регулирующих языковую политику, обобщены сложности применения этих законов в современный период.

Были проведены экспертные интервью с представителями структур, регулирующих языковую политику в Армении на основе которых были представлены современные тенденции, принципы и проблемы развития языковой политики Республики Армения. Развитие языка и общества не только не исключает, но и предполагает возможность и необходимость сознательного воздействия на язык.

Ներկայացվել է՝ 02.02.2024

գրախոսվել է՝ 25.07.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanianhasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանայան Լուսինե Ասատուրի*սլավոնական գիությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս

armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի*սլավոնական գիությունների թեկնածու, դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող

r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan

The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan

Mariam Harutyunyan

Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW

248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян

Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян

Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 248 263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

